17.04.26 - 18.04.26
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Հայաստան, Աղվերան, Դիլիջան

Ս.թ. ապրիլի 17-18-ը Աղվերանում և Դիլիջանում տեղի կունենա ««ՀՀ սնկերի բազմազանությունը»՝ COP 17-ին ընդառաջ» խորագրով աշխատաժողով, որը կազմակերպվում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի կողմից իրականացվող «APPEAR Project 373» ծրագրի շրջանակում:

Աշխատաժողովը նպատակ ունի համախմբելու պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների, գիտական և կրթական հաստատությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու սնկերի կենսաբազմազանության ուսումնասիրության, ԴՆԹ բարկոդավորման կիրառության, ինչպես նաև բնության պահպանության և կայուն զարգացման ոլորտներում համագործակցության հնարավորությունները:

Միջոցառման ընթացքում կներկայացվեն ծրագրի նպատակները, աշխատանքների ընթացքը և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև կկազմակերպվի մասնագիտական քննարկում՝ շահագրգիռ կողմերի (Stakeholder Workshop) մասնակցությամբ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am